ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 փետրվարի 2025 թվականի N 195-Ն

ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՅԴՊԻՍԻՆ ՈՐԱԿՈՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՁԵՎԱՎՈՐԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ԿԱԶՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՅԴՊԻՍԻՆ ՈՐԱԿԵԼՈՒ ԿԱՐԳԸ, ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄՆԵՐԻ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետը, 123-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը, 150-րդ հոդվածի 1.1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Ձևավորել գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակող մասնագիտական հանձնաժողով:

2. Սահմանել գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակող մասնագիտական հանձնաժողովի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի:

3. Սահմանել գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների չափանիշները՝ համաձայն N 2 հավելվածի:

4. Սահմանել՝

1) գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակող մասնագիտական հանձնաժողովի գործունեության կարգը՝ համաձայն N 3 հավելվածի.

2) գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակող մասնագիտական հանձնաժողովի կողմից գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակելու կարգը՝ համաձայն N 4 հավելվածի:

5. Սահմանել, որ սույն որոշումը չի տարածվում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող՝ կիրառական գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքների վրա:

6. Սահմանել, որ հանձնաժողովի անհատական կազմը հաստատում է Հայաստանի Հանրապետության վարչապետը:

7. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի՝

1) 121-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով սահմանված կարգավորումները կիրառվում են գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակելու նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտե հայտը ներկայացնելու օրն ընդգրկող ամսվա 1-ից սկսած (բայց ոչ շուտ, քան աշխատանքները սկսելու օրն ընդգրկող ամսվա 1-ը) Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով հաշվարկվող ամորտիզացիոն մասհանումների մասով, եթե այլ բան սահմանված չէ սույն որոշման 8-րդ կետով.

2) 123-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետի մասով կիրառվում է գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակելու նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտե հայտը ներկայացնելու օրն ընդգրկող ամսվա 1-ից սկսած

(բայց ոչ շուտ, քան աշխատանքները սկսելու օրն ընդգրկող ամսվա 1-ը) հաշվարկված՝ աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների մասով, եթե այլ բան սահմանված չէ սույն որոշման 8-րդ կետով.

3) 150-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգավորումները կիրառվում են գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները որպես այդպիսին որակելու նպատակով Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության բարձրագույն կրթության և գիտության կոմիտե հայտը ներկայացնելու օրն ընդգրկող ամսվա 1-ից սկսած (բայց ոչ շուտ, քան աշխատանքները սկսելու օրն ընդգրկող ամսվա 1-ը) հաշվարկված՝ աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների մասով, եթե այլ բան սահմանված չէ սույն որոշման 8-րդ կետով:

8. Սահմանել, որ 2025 թվականի ապրիլի 1-ից մինչև ապրիլի 30-ը ներառյալ ներկայացված հայտերը մասնագիտական հանձնաժողովի կողմից որպես գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքներ որակվելու դեպքում Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 121-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 123-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով և 150-րդ հոդվածի 1.1-ին մասով սահմանված կարգավորումները կիրառվում են գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքները սկսելու օրն ընդգրկող ամսվա 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ: Ընդ որում, եթե աշխատանքները սկսելու օրը ավելի վաղ է, քան 2025 թվականի հունվարի 1-ը, ապա նշյալ կարգավորումները կիրառվում են 2025 թվականի հունվարի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ, իսկ եթե գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքների իրականացման ժամկետը նախատեսված է ավելի ուշ, քան հայտը ներկայացնելու օրը, ապա նշյալ կարգավորումները կիրառվում են աշխատանքները սկսելու օրն ընդգրկող ամսվա 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

9. Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական համալիրի գործունեության սուբյեկտների (ռազմարդյունաբերական համալիրի ամփոփ ցուցակում

(ռեեստրում) գրանցված) կողմից Հայաստանի Հանրապետության ռազմարդյունաբերական հանձնաժողովին կից ռազմատեխնիկական և գիտատեխնիկական խորհրդին ներկայացված գիտական հետազոտությունների և փորձարարական մշակումների աշխատանքների իրականացման մասով կիրառվում են սույն որոշման 7-րդ և 8-րդ կետերով սահմանված ժամկետները:

10. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

25.02.2025
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ